# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2024 թվականի N 113 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՈՒՇԿԻՆՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-093-0365-0001 ԵՎ 06-093-371-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ, 50.7655 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ՀԱՅԱՍԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ ՔՈՐՓ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայասա Ռեսուրսիս Քորփ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումը, ՀՀ ՏԿԵՆ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 06.10.2023թ. թիվ ԵՀԹ-29/371 թույլտվությունը, ընդերքօգտագործման 06.10.2023թ. թիվ Պ-371 պայմանագիրը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 25.01.2023թ. տրված ԲՓ N 0011-23 պետական փորձաքննության եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 76-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշման 44-րդ կետի «ը» ենթակետը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրի վարչական սահմանում գտնվող, 06-093-0365-0001 և 06-093-0371-0001 կադաստրային ծածկագրերով, 50.7655 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը՝ երկրաբանական ուսումնասիրություն կատարելու նպատակով, երեք տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել «Հայասա Ռեսուրսիս Քորփ» ՍՊԸ-ին ի դեմս տնօրեն Հովհաննես Կարապետյանի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-093-0365-0001 եվ 06-093-0371-0001 կադաստրային ծածկագրերով, 50.7655 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի երեք տարվա համար վարձավճարի չափը սահմանել՝ 1800000/մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքել հողամասերի վարձակալության պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ (17) | Դեմ (2) | Ձեռնպահ (2) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Աիդա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | բացակա |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | — | — | | — |
| Գևորգյան Համլետ | — | — | | — |
| Քալաշյան Վարսենիկ | — | — | — | բացակա |
| Արոյան Տիգրան | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | — | | — | — |
| Գրիգորյան Թամարա | — | | — | — |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/